Անշարժ գույքի գրավադրմամբ վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական և էքսպրես վարկերի տրամադրման անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

	Փուլ 1. Հայտի ընդունում, վարկարժանության գնահատում	**Փաստաթղթի ներկայացման ձև/ Վաղեմության ժամկետ**
1	Վարկային դիմում-հայտ	Բնօրինակ
2	Վարկառուի, գրավատուի (առկայության դեպքում՝ վերջիններիս ամուսինների) անձը հաստատող փաստաթուղթ	Բնօրինակ
3	Վարկառուի, գրավատուի ամուսնության վկայական, ամուսնու մահվան դեպքում՝ ամուսնության և մահվան վկայականները, ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայականը	Բնօրինակ
4	Վարկի ապահովության միջոց հանդիսացող անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական	
5	Անշարժ գույքի հատակագիծ (պահանջվում է բնակելի տան դեպքում, բնակարանի դեպքում՝ ըստ անհրաժեշտության)	
6	Այլ կազմակերպությունում առկա վարկային պարտավորության վերաֆինանսավորման դեպքում պահանջվում է նաև.	
	6.1 Վերաֆինանսավորվող պարտավորության վարկային, գրավի (գլխավոր պայմանագրի առկայության դեպքում՝ նաև վերջինիս շրջանակում կնքված բոլոր պարտավորությունների գծով) պայմանագրերի պատճեններ՝ ըստ անհրաժեշտության	
	6.2 Տեղեկանք կամ քաղվածք վերաֆինանսավորվող պարտավորության չափի մասին՝ ստորագրված իրավասու անձի կողմից, ստորև տեղեկատվության առկայությամբ. -վերաֆինանսավորման ենթակա պարտավորության չափ, -ՀՀ ԿԲ վարկային կոդի/վարկի մարման համար անհրաժեշտ հաշվեհամար -օրական հաշվեգրվող տոկոսի չափ (ոչ պարտադիր) Եթե վերաֆինանսավորվում է ՈՒՎԿ-ում առկա պարտավորությունը՝ անհրաժեշտ է վարկային հաշվեհամարի նշում: Ընդ որում, եթե ներկայացված տեղեկատվությունը մի քանի փաստաթղթով է և հնարավոր է նույնականացնել՝ հիմք են ընդունվում առկա բոլոր փաստաթղթերը միաժամանակ:	1 ամիս
7	Հայտի ուսումնասիրության վճարի կտրոն	Դիմումի ամսաթիվ

Փուլ 2. Հայտի վերլուծության և վարկի վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթեր		
8	Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպության կողմից տրամադրված գնահատման հաշվետվություն	6 ամիս
	Վերաֆինանսավորման դեպքում գնահատող կազմակերպության նկատմամբ վերոնշյալ պահանջը կարող է լինել ոչ պարտադիր՝ համաձայն Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված դեպքերի («Գույքի գնահատման գործընթացի եվ վերանորոգման/վերակառուցման նախահաշվի փորձաքննության իրականացման ընթացակարգ»):	36 ամիս
9	Եկամուտների վերլուծության դեպքում. 9.1 Վերջին 12 ամիսներին ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափի վերաբերյալ տեղեկանք և աշխատավարձային հաշվի քաղվածք/անհատական հաշվի քաղվածք՝ Նորք ՏՎԿ կողմից աշխատավարձի չհավաստման դեպքում: Եթե աշխատավայրը և փոխանցվող աշխատավարձը հնարավոր չէ նույնականացնել, աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքը պարտադիր է:	Բնօրինակ, 1 ամիս
	9.2 Կենսաթոշակի վկայական 9.3 Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր 9.4 Ձեռնարկատիրական գործունեության դեպքում՝ վարկառուի կամ ամուսնու ԱՁ-ի շրջանառության հարկի կամ ԱԱՀ հաշվետվություն, կամ կազմակերպության (որի մասնակից են վարկառուն կամ վարկառուի ամուսինը) շահութահարկի հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածի համար.	
10	Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում)	
Փուլ 3. Վարկի և գրավի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր		
11	Միասնական տեղեկանք ՀՀ կադաստրի կոմիտեից գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ	15 աշխատանքային օր
12	Անհրաժեշտության դեպքում՝ նաև սեփականության վկայականի տրման հիմքեր (սեփականաշնորհման որոշումներ, առուվաճառքի, նվիրատվության պայմանագիր, ժառանգության իրավունքի վկայագրիր, դատարանի վճիռներ և այլն)	
13	Գույքի ձեռք բերման հիմքերից կախված՝ գրավատուների ամուսնացած լինելու դեպքում՝ ամուսնության վկայական, ամուսնու մահվան դեպքում՝ մահվան վկայականի, ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայական	
14	Լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ և լիազորագիր՝ համաձայն Բանկի կողմից սահմանված ձևի	
15	Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում)	
Փուլ 4. Գրավի ձևակերպումից հետո անհրաժեշտ փաստաթղթեր		

16	Բանկում հաջորդող գրավի իրավունքով գրավադրված գույքի՝ ՀՀ այլ բանկում կամ վարկային կազմակերպությունում գրավից ազատումը հավաստող փաստաթուղթ՝ բերված ՀՀ կադաստրի կոմիտեից	

Փաստաթղթերի ցանկի վերաբերյալ ընդհանուր դրույթներ
Անձը հաստատող փաստաթուղթ է համարվում ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, վերադարձի վկայականը՝ միայն Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիրը, ծննդյան վկայականը. փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը: Օտարերկրյա փաստաթղթի դեպքում՝ նոտարական վավերացմամբ թարգմանությունը
Օտարալեզու փաստաթղթերը (լիազորագիր և այլն) օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետք է վավերացված լինեն ապոստիլով: Օտարալեզու փաստաթղթերը, այդ թվում՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով տրվածները, պետք է լինեն թարգմանված հայերեն և վավերացված լինեն նոտարական կարգով, բացառությամբ՝ ԽՍՀՄ ժամանակաշրջանում ռուսերեն լեզվով ամուսնության վկայականների:Վերջիններիս թարգմանություն չի պահանջվում:
Եթե գործարքի կողմերից (գրավատու և այլն) որևէ մեկի փոխարեն հանդես է գալիս լիազորված անձ, ապա պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է լիազորագիր (նոտարական վավերացմամբ կամ նոտարական վավերացմանը հավասարեցված) , լիազորող անձի(գրավատուի կամ վարկառուի վավեր/գործող անձնագիրը) և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ: Լիազորագիրը պետք է համապատասխանի Բանկի պահանջներին, այն Բանկի համար ընդունելի է լիազորագրում նշված ժամկետում, սակայն ոչ ավել, քան լիազորագրի տրման օրվանից 3 տարվա ընթացքում, իսկ լիազորագրով ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ լիազորագրի տրման օրվանից մեկ տարվա ընթացքում: Իրավաբանական անձի կողմից տրամադրված լիազորագիրը նոտարական վավերացում չի պահանջում: